



# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

21.07.2017թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԱՄ-2017/27**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.07.2017թ. թիվ 03/27-1/12020-17 գրությամբ «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

### **1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1953 գրության հիման վրա, 03.07.2017թ. թիվ 03/27-1/12020-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

## 2. «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 18.07.2017թ. գրությամբ, հայտնել է որ Ընկերությունը չի խուսափել և խառնափում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումից: Ընկերությունը մինչ այս մասնակցել է մրցույթներին և բոլոր հայտերը ճշգրիտ կերպով լրացրել է, քանի որ ձևաթղթերում հստակ նշված է եղել թե համապատասխան սյունակում ինչ պետք է նշվի, սակայն այս անգամ թյուրիմացություն է առաջացել և պատճառը եղել է ձևաթղթի թերի լինելը, այն է՝ «Գնի առաջարկ» վերանգրով փաստաթղթում նշված չի եղել, թե պետք է նշվի մրցույթով պահանջվող ամբողջ խմբաքանակի գինը, թե՛ մեկ հատ ձվի գինը: Նշված է եղել 2-րդ սյունակում «Ապրանքի անվանում», 3-րդ սյունակում՝ «Արժեք», 4-րդ սյունակում՝ «ԱԱՀ», իսկ վերջին 5-րդ սյունակում՝ «Առաջարկվող ապրանքի ընդհանուր գինը»: Համապատասխան սյունակներում Ընկերությունը լրացրել է մեկ ձվի արժեքը 47 ՀՀ դրամ (որից՝ 39,17 ՀՀ դրամը ինքնարժեք և կանխատեսվող շահույթի հանրագումար, իսկ 7,83 ՀՀ դրամը՝ ԱԱՀ):

Նշված խնդրի հետ կապված Ընկերությանը որևէ պաշտոնատար անձ մատնանշում չի կատարել՝ ինչպես նաև այն ժամանակ երբ երկօրյա ժամանակ է տրվել թերությունները և սխալները ուղղելու համար, տարբեր խնդրիներ մատնանշվել են բացի սույն խնդրից:

Ըստ էության որոգայթային իրավիճակում է հայտնվել Ընկերությունը, քանի որ ոչ հանձնաժողովը և ոչ էլ ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան աշխատակիցները չեն մատնանշել նշված խնդրի մասին: Եթե նշված պաշտոնատար անձինք այն կարծիքին են, որ պետք է լրացվեր ընդհանուր խմբաքանակի գումարը, ապա Ընկերության առաջարկը ստանալուց հետո պետք է առաջարկեին ուղղում կատարել: Սույն պատճառաբանությունը բերվում է այն նկատառումներով, որ Ընկերության կողմից առաջարկվել է 47 ՀՀ դրամ և այն բնականաբար չէր կարող ընդհանուր խմբաքանակի համար լինել, այն դեպքում երբ գնի առաջարկ վերանգրով հավելվածում որևէ նշում առկա չէ այն մասին, որ պետք է լրացվի ընդհանուր խմբաքանակի արժեքը:

Մինչ այս առաջարկվող ձևաթղթերում հստակ կերպով նշված է եղել մեկ միավորի գինը, քանակը, մեկ միավորի առաջարկված գինը և առաջարկվող ընդհանուր գինը,

այսինքն՝ մինչ այս Ընկերությանն ուղարկված ձևաթղթերում հստակ նշված է եղել, թե որ սյունակում ինչ պետք է լրացվի, որը և բացառել է շփոթությունը:

Վերը նշված հանգամանքներից ելնելով, Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չպետք է կիրառվի: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ Ընկերության կողմից 19.04.2017թ. դիմում է ուղարկվել ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտին, որտեղ վերջիններիս պահանջով նշվել է. «Խնդրում ենք չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերության մասնակցության հայտը, քանի որ գնային առաջարկ հավելվածում Ընկերության կողմից նշված գինը վերաբերվել է ձվի մեկ միավորին...», մինչդեռ՝ Ընկերության կողմից զուտ պետք է նշվեր այն դիրքորոշումը, որ Ընկերության կողմից նշվել է մեկ ձվի արժեքը, քանի որ որևէ դրույթ առկա չէ այն մասին, որ Ընկերությունը պետք է նշեր ընդհանուր չափաբաժնի արժեքը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ եթե պատասխանատվության խնդիր է առաջանում, այն է՝ եթե ձևաթղթում պետք է լրացվեր ընդհանուր խմբաքանակի գինը և ոչ թե մեկ հատ ձվի գինը, ապա պատասխանատվության միջոցներ պետք է կիրառվի համապատասխան պաշտոնատար անձի նկատմամբ իր մեղքի չափով և նոր միայն Ընկերության նկատմամբ իր մեղքի չափով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

### **3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1953 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն, սակայն Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գրություն է ներկայացրել, համաձայն որի հրաժարվել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով իր կողմից ներկայացված գնային առաջարկից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1953 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

#### **4. ՍՑ-ԱՄ-2017/27 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2017/27 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով ընթացակարգի հանձնաժողովի 2017թ. ապրիլի 6-ի թիվ 1 որոշմամբ կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի թիվ 667-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 28.02.2017թ. թիվ 72-Ա հրամանի համաձայն՝ հրավերի օրինակելի ձևերի Հավելված 4 աղյուսակը հաստատվել է նոր խմբագրությամբ:

(ՀՀ դրամ)

| Չափա-<br>բաժին<br>ների<br>համա-<br>րները | Ապրանքի անվանումը                        | Արժեք<br>(ինքնարժեքի և կանխատեսվող<br>շահույթի հանրագումարը) | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/ |
|------------------------------------------|------------------------------------------|--------------------------------------------------------------|------|----------------------------------------------------|
| 1                                        | 2                                        | 3                                                            | 4    | 5=3+4                                              |
| 1                                        | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> |                                                              |      |                                                    |
| 2                                        | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> |                                                              |      |                                                    |
| 3                                        | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> |                                                              |      |                                                    |
| ...                                      | ...                                      |                                                              |      |                                                    |
| ...                                      | ...                                      |                                                              |      |                                                    |

\*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

3. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 4.1.1 կետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից սույն հրավերի առաջին մասի 7.9-րդ կետով սահմանված կարգով ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

4. Ընթացակարգի հրավերի N 4 հավելվածը՝ գնի առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 4

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով  
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի  
« ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով  
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու  
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ Ն Ի Ա Ռ Ա Զ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

| Չափա-<br>բաժիններ<br>ի<br>համարները | Ապրանքի անվանումը             | Արժեք<br>(ինքնարժեքի և կանխատեսվող<br>շահույթի հանրագումարը) | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/ |
|-------------------------------------|-------------------------------|--------------------------------------------------------------|------|----------------------------------------------------|
| 1                                   | 2                             | 3                                                            | 4    | 5=3+4                                              |
| 1                                   | «Գնման առարկայի ամփոփում N1»» |                                                              |      |                                                    |
| 2                                   | «Գնման առարկայի ամփոփում N2»» |                                                              |      |                                                    |
| 3                                   | «Գնման առարկայի ամփոփում N3»» |                                                              |      |                                                    |
| ...                                 | ...                           |                                                              |      |                                                    |
| ...                                 | ...                           |                                                              |      |                                                    |

\*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տրվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.04.2017թ. արձանագրվել է, որ «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 19.04.2017թ. գրություն է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որով հրաժարվել է իր կողմից ներկայացված հայտից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնակցի գրությունը, մերժել է հայտը և 26.04.2017թ. ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ին:

7. «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 19.04.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրությամբ խնդրել է չեղյալ համարել Ընկերության մասնակցության հայտը,

քանի որ գնային առաջարկում Ընկերության կողմից նշված գինը վերաբերվել է ձվի մեկ միավորին, մինչդեռ՝ ամբողջ խմբաքանակի համար ընդհանուր գումարը համապատասխանաբար 1-ին չափաբաժնի համար /հավի ծու 30-ական/ կկազմեր 73 502 360 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/, իսկ 2-րդ չափաբաժնի համար /հավի՝ ծու 6-ական/ կկազմեր 26 000 000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/:

8. «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 18.07.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չպետք է կիրառվի, քանի որ խնդիրը կայանում է նրանում, որ Ընկերության կողմից 19.04.2017թ. դիմում է ուղարկվել ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտին, որտեղ վերջիններիս պահանջով նշվել է. «Խնդրում ենք չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերության մասնակցության հայտը, քանի որ գնային առաջարկ հավելվածում Ընկերության կողմից նշված գինը վերաբերվել է ձվի մեկ միավորին...», մինչդեռ՝ Ընկերության կողմից զուտ պետք է նշվեր այն դիրքորոշումը, որ Ընկերության կողմից նշվել է մեկ ձվի արժեքը, քանի որ որևէ դրույթ առկա չէ այն մասին, որ Ընկերությունը պետք է նշեր ընդհանուր չափաբաժնի արժեքը:

##### **5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.07.2017թ. թիվ 03/27-1/12020-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1953 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ի 19.04.2017թ. և 18.07.2017թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

**2) գնային առաջարկը.**

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հայտը վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի (շրջանակային համաձայնագրի) կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:**

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ **հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:**

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, **բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը**

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով ընթացակարգի **հանձնաժողովի 2017թ. ապրիլի 6-ի թիվ 1 որոշմամբ** կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի թիվ 667-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի **28.02.2017թ. թիվ 72-Ա հրամանի համաձայն՝ հրավերի օրինակելի ձևերի Հավելված 4 աղյուսակը հաստատվել է նոր խմբագրությամբ.**

(ՀՀ դրամ)

| Զախա-<br>բաժին<br>ների<br>համա-<br>րները | Ապրանքի անվանումը                     | Արժեք<br>(ինքնարժեքի և կանխատեսվող<br>շահույթի հանրագումարը) | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/ |
|------------------------------------------|---------------------------------------|--------------------------------------------------------------|------|----------------------------------------------------|
| 1                                        | 2                                     | 3                                                            | 4    | 5=3+4                                              |
| 1                                        | «Գնման առարկայի չափաքանի անվանում N1» |                                                              |      |                                                    |
| 2                                        | «Գնման առարկայի չափաքանի անվանում N2» |                                                              |      |                                                    |
| 3                                        | «Գնման առարկայի չափաքանի անվանում N3» |                                                              |      |                                                    |
| ...                                      | ...                                   |                                                              |      |                                                    |
| ...                                      | ...                                   |                                                              |      |                                                    |

**\*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 4.1.1 կետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ

մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում~~է~~ Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից սույն հրավերի առաջին մասի 7.9-րդ կետով սահմանված կարգով ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգի հրավերի N 4 հավելվածը՝ գնի առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 4

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով  
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի  
« ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով  
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու  
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

#### Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

| Չափա-<br>բաժիններ<br>ի<br>համարնե<br>րը | Ապրանքի անվանումը                        | Արժեք<br>(ինքնարժեքի և կանխատեսվող<br>շահույթի հանրագումարը) | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/ |
|-----------------------------------------|------------------------------------------|--------------------------------------------------------------|------|----------------------------------------------------|
| 1                                       | 2                                        | 3                                                            | 4    | 5=3+4                                              |
| 1                                       | <<Գնման առարկայի չափաբաժին անվանում N1>> |                                                              |      |                                                    |
| 2                                       | <<Գնման առարկայի չափաբաժին անվանում N2>> |                                                              |      |                                                    |
| 3                                       | <<Գնման առարկայի չափաբաժին անվանում N3>> |                                                              |      |                                                    |
| ...                                     | ...                                      |                                                              |      |                                                    |
| ...                                     | ...                                      |                                                              |      |                                                    |

\*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.04.2017թ. արձանագրվել է, որ «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 19.04.2017թ. գրություն է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որով հրաժարվել է իր կողմից ներկայացված հայտից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնակցի գրությունը, մերժել է հայտը և 26.04.2017թ. ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ին:

**«Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 19.04.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրությամբ խնդրել է չեղյալ համարել Ընկերության մասնակցության հայտը, քանի որ գնային առաջարկում Ընկերության կողմից նշված գինը վերաբերվել է ձվի մեկ միավորին, մինչդեռ՝ ամբողջ խմբաքանակի համար ընդհանուր գումարը համապատասխանաբար 1-ին չափաբաժնի համար /հավի ձու 30-ական/ կկազմեր 73 502 360 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/, իսկ 2-րդ չափաբաժնի համար /հավի ձու 6-ական/ կկազմեր 26 000 000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/:**

«Աշտարակ Ձու» ՍՊԸ-ն 18.07.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չպետք է կիրառվի, քանի որ խնդիրը կայանում է նրանում, որ Ընկերության կողմից 19.04.2017թ. դիմում է ուղարկվել ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտին, որտեղ վերջիններիս պահանջով նշվել է. «Խնդրում ենք չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերության մասնակցության հայտը, քանի որ գնային առաջարկ հավելվածում Ընկերության կողմից նշված գինը վերաբերվել է ձվի մեկ միավորին...», մինչդեռ՝ Ընկերության կողմից զուտ պետք է նշվեր այն դիրքորոշումը, որ Ընկերության կողմից նշվել է մեկ ձվի արժեքը, քանի որ որևէ դրույթ առկա չէ այն մասին, որ Ընկերությունը պետք է նշեր ընդհանուր չափաբաժնի արժեքը:

Այսպես՝ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հայրը վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի (շրջանակային համաձայնագրի) կնքումը, մասնակցի կողմից հայրը հեղ փերցնելը, հայրի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայրաբարվելը:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *մասնակիցը մինչև հայրերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հեղ փերցնել իր հայրը:*

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ *մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայրը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:*

Խորհուրդն, ռաումնասիրելով «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, արձանագրում է, որ Ընկերությունը *մեկ անգամ է խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը*, հետևաբար թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 03.07.2017թ. թիվ 03/27-1/12020-17 գրությամբ «Աշտարակ Ձու» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05534309) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման  
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ